անտարակոյս, յուլիսի 13, օրն հինգշաբթի թվին ՌՃԳ. ի փառս Աստուծոյ։ Կատարեցաւ ճաշու գիրքս ձեռամբ անարժան Անտոն վարդապետի, ի մայրաքաղաքն Սէջով, ի դուռն Ս. Խաչին, թվ. ՌՃԳ, օգոստոսի ամսոյն 11, Փոխման Աստուածածնին պահոց. բայց և սկիզբն արաք ի Եազլովցա քաղաքն, նոյն տարի, ամսոյն մայիսի, Գ աւուր յառաջ քան զՀամբարձումն, չորեքշաբաթի օր, ի փառս Աստուծոյ։ Փա՛ռք քեզ, Աստուած յաղագս յամենայնի։ [Ի Ս. Ղազար]։

1655.

Գրեցաւ Ապաշխարութեան երգ, մարտի մէկ, թվ. ՌՃԴ, աղուհացիկ առաջի շաբաթուն հինգշաբթի, ձեռամբ մեղաւոր Անտոն վարդապետի, ի քաղաքն Սէջով։... Գրեցաւ ձեռամբ մեղաւոր Անտոն եպիսկոպոսի և վարդապետի թվ. ՌՃԴ մարտի ամսոյն ԻԱ, օրն չորեքշաբթի. միջնաց աղուհացիկ։

1657.

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցաւ Շարակնոցս ի յաշխարհս Իլսխաց Զամոշչայ. ի թվին ՌՃԶ, նոյեմբ. 9, օրն երկուշաբթի. բայց գրեցաւ ձեռամբ թերավարժ ձաբրտող նօտրիս գրչի, հողս մեղապարտ Նիկոլ երէց կոչեցեալ անուամբ և ոչ գործով ի կարգ քրիստոնէութեամբ. անպարապ անձամբ ձեռնարկեցի. և ի հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Տէր Յակոբին և յառաջնորդութեանն արհիեպիսկոպոսին Տէր Նիկողայոսին Թորոսովից, և ի թագաւորութեան գրուլ Քաժմիրին, և իշխանութեանն Զամոշչայ քաղքի Եան Զամոսքի։ Գրեցաւ ի դուռն Ս. Ննջման Ս. Աստուածածնի և այլ սրբոց եւ սպասաւոր Ս. եկեղեցւոյս ժամանակիս մեղսաքաւիչ քահանայից, աշխատաւոր և ծերացեալ ալեօք 94ամեայ Տէր Յակոբ քահանայի, և միւս այլ Տէր Յովանէս պատուական քահանայի, որ է որդի Քրիստոսատուրի Կաֆայի քաղաքի։ Նա և թէ արժանի համարիք զտկարս անարժան և զփծուն գրիչ Նիկոլ երէց ցաւակցարար յիշել ի սուրբ և ի փառաւոր յատեան. երես անկեալ կու խնդրեմ զգաղափարողդ, որ մեղադիր չլինիք նօտրիս. զի ծերացեալ ալեօք գծագրեցի 60ամեայ գոլով. աչքս ի լուսոյ էր պակասեալ և զգայարանքս ի յուժոյ. կ'աղաչեմ որ անպարսաւ թողուք, և զմեզ յիշէք յերկնաքացիկ աղօթս ձեր, և զծնողս իմ՝ Մուրատն, և զմայրն իմ՝ Եահուան, և զիրիցկինս իմ հանգուցեալ Մարիամ, և այլն։ [Ի Ս. Ղազար]։

1657.

Հայոց թվ. ՌՃԶ, նոյեմբերի ԻԷ, մեռաւ Զոսիմոս արեղայն ի Լով քաղաք, մահտարաժամ մահուամբ. Աստուած իւրն ողորմի. ամէն։ — Գուրէլոյ Ռէշնովէցքի։